ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 8 փետրվարի 2021թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Ա. Թունյանի
Ա. Վաղարշյանի

Քննության առնելով «Նոր Զովք» ՍՊԸ-ի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «Նոր Զովք» ՍՊԸ-ն (ներկայացուցիչ՝ փաստաբան Ա. Կիվիրյան) դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2021 թվականի հունվարի 18-ին)՝ խնդրելով.

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

2. Դիմողը գտնում է, որ «Սնանկության մասին» օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասում առկա է իրավական անորոշությամբ պայմանավորված օրենսդրական բաց, ինչի արդյունքում իր վրա դրվել է անհիմն ֆինանսական զգալի բեռ:

Ըստ դիմողի՝ «Սնանկության մասին» օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով չպետք է նախատեսվի ժամանակավոր կառավարչի վարձատրության իրավունք այն դեպքում, երբ սնանկության գործի վարույթը կարճվում է:

Դիմողը գտնում է, որ կառավարչի համար վարձատրություն ստանալու իրավունքը պետք է ծագի ոչ թե զուտ ժամանակավոր կառավարիչ նշանակվելու, այլ իր լիազորություններն իրացնելու և համապատասխան աշխատանք կատարելու փաստով: Ընդ որում, ըստ դիմողի, պետք է հստակ սահմանվեն ժամանակավոր կառավարչի վարձատրության չափի հաշվարկման ելակետային պայմանները, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ժամանակավոր կառավարիչը պետք է հիմնավորի և ապացուցի, թե իր կողմից ի՛նչ ծավալի աշխատանքներ են կատարվել, որոնցով էլ պայմանավորվել է վարձատրություն ստանալու իրավունքը:

Մինչդեռ, ըստ դիմողի, վիճարկվող իրավակարգավորման պայմաններում ստացվում է, որ սնանկության գործով ժամանակավոր կառավարչի կողմից սնանկության վարույթի շրջանակներում որևէ գործողություն չձեռնարկելու և որևէ աշխատանք չկատարելու դեպքում անգամ սնանկության ժամանակավոր կառավարիչն իրավունք ունի ստանալու վարձատրություն՝ պարտապանի տնօրենի տարեկան վաստակի 1/12 չափով, որը մի շարք դեպքերում կարող է կազմել զգալի գումար:

3. Ելնելով դիմումի և գործում առկա դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին որոշում է ընդունում … սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում»:

«Սահմանադրական դատարան մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ … դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները …»:

Դիմողի վերաբերյալ գործով դատական ակտերի ուսումնասիրությունից երևում է, որ Վճռաբեկ դատարանն իր՝ 2019 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ բեկանել է վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.07.2018թ. որոշումը և գործն ուղարկել Սնանկության դատարան՝ նոր քննության: Մինչդեռ, Սնանկության դատարանի կողմից գործով ըստ էության նոր վճիռ կայացվելուց հետո դեռևս պահպանվում է վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկման ձևով դատական պաշտպանության միջոցներից օգտվելու հնարավորությունը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«Նոր Զովք» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Ա. Խաչատրյանի

Անդամներ՝ Ա. Թունյանի

Ա. Վաղարշյանի

8 փետրվարի 2021 թվականի
ՍԴԴԿՈ-4